5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	**08-001-1171-0019-001**	**Մանկապարտեզ**	**261.37 ք.մ.**	**ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարատ Կարաքեշիշյան

զբաղեցրած պաշտոնը՝ Շիրակի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

ESTATE CADASTRE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 153 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Գյումրու համայնքային սեփականություն համարվող Երևանյան խճուղի N 30ա հասցեի նախակրթարանի շենքի երկու մասնաշենքերը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության օգտագործումից հետ վերցնելու և դրանք անհատույց օգտագործման իրավունքով ամերիկյան «Փարոս» հիմնադրամի «Դեպի առաջ» հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին» N 120-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և «դրանք» բառը փոխարինել «այն» բառով,
   2) որոշման 1-ին կետի 3-րդ տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով և 4-րդ տողի «մասնաշենքը» բառը փոխարինել «երկու մասնաշենքերը» բառերով,
   3) որոշման 2-րդ կետի 1-ին տողի «երկու մասնաշենքերը» բառերը փոխարինել «մեկ մասնաշենքը» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (19) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Գ.Ադամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Լ.Բարսեղյան
Մ.Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Մ.Սահակյան
Տ.Փանոսյան

Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

14 նոյեմբերի 2014թ.
ք.Գյումրի

Երևան, 22.04.2024 թ.

Գյումրի համայնքի ղեկավար՝ Վ. Սամսոնյանին
«Դեպի առաջ» բարեգործական
հասարակական կազմակերպության
Նախագահ՝ Սևան Ամիրյանից

Հարգելի Պրն Սամսոնյան

Սույնով պաշտոնապես հայտնում ենք Ձեզ որ, «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպությունը (ՀՎՀՀ 00463845), իրեն անհատույց տրամադրված՝ համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 107/6 նախակրթարան հասցեում գտնվող անշարժ գույքի (Այսուհետ անշարժ գույքի) նկատմամբ իրավունքներից հրաժարվում է և ցանկանում է այն հետ վերադացնել համայնքին: Խնդրում ենք այս ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք նշել որ տվյալ անշարժ գույքը մեր կազմակերպությանը տրամադրումը երբեք գործնական փուլի չի հասել, և այն մինչ օրս մնում է «Առաքելություն Հայաստան» կազմակերպության տիրապետության տակ. որի պատճառն է այդ կազմակերպության հրաժարումը տարածքի ազատելուց, որի մասին քաջատեղյակ են Գյումրու համայնքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի ղեկավարությունը:

Հաշվի առնելով վերոնշված փաստը խնդրում ենք Ձեզ միջոցներ ձեռնարկել 16.04.2024 թվականին հարուցված վարչական վարույթի չեղարկման ուղղությամբ:

Կից Ձեզ ենք ներկայացնում բոլոր առնչվող փաստաթղթերը:

Հարգանքով
«Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Սևան Ամիրյանս

«ԴԵՊԻ ԱՌԱՋ»
"MOVING FORWARD"
"ВПЕРЕД"
00463845

«Դեպի առաջ» բարեգործական ՀԿ
Երևան - Դերենիկ Դեմիրճյան 36
Գյումրի - Մ. Խորենացի 31/8
(00374) 91 42 61 20
depiarach@gmail.com

Debi Arach charitable NGO
Yerevan: Derenik Demirjyan 36
Gyumri: M. Khorenatsi 38/1
(00374) 91 42 61 20
www.debiarach.org

ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱԿՏ

« 01 » փետրվարի 2016 թ. Ք. ԳՅՈՒՄՐԻ

Համաձայն անշարժ գույքի անհատույց օգտագործման 25.12.2015թվականի N ԱՆ 2054 պայմանագրի Գյումրու համայնքապետարանը <<Դեպի առաջ>> բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Սևան Իսրայելի Ամիրյանսին հանձնեց Երևանյան խճուղի N 107/6 հասցեի 261.37 քառակուսի մետր մակերեսով շինությունը և 0.20799 հա հողամասը 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման համար:

Հանձնող

Գյումրու համայնքապետարանի
լիազորված անձ
Քաղաքաշինության և
ճարտարապետության
Բաժնի պետ՝ Ա.Հակոբյան

Ընդունող

<<Դեպի առաջ>>
Հասարակական
կազմակերպության նախագահ՝ Ս.Ամիրյան

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՆ-2054

Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր

ք. Գյումրի

քսանհինգ դեկտեմբերի երկու հազար տասնհինգ թվական

Գյումրի համայնք, Վարդանանց հրպ. 1 (այսուհետ՝ Փոխատու) ի դեմս Գյումրի համայնքի ղեկավար Ս. Բալասանյանի, որի անունից 18.12.2015թ., N 01/10884-15, լիազորագրով հանդես է գալիս Գյումրի համայնքի ղեկավարի աշխատակազմի Քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի աշխատակից Կոնստանտին Միխայելի Ղավազյանը (անձ. AM 0762109, տրված՝ 07.06.2012թ., կոդ 016, հաշվառված է՝ ք. Գյումրի Խրիմյան Հայրիկի փող.,4բ շ., բն 54) մի կողմից և մյուս կողմից <<Դեպի առաջ>> բարեգործական հասարակական կազմակերպությունը (որը գործում է կանոնադրության հիման վրա՝ գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի կողմից N 03Ա 975003 վկայական)՝ ի դեմս կազմակերպության նախագահ Սևան Իսրայելի Ամիրյանի (ծնվ. 19.02.1962թ., անձն. AA 0007667, տրված 30.06.2015թ. կոդ 002, հաշվառված է ք. Երևան Թոթովենցի 11 շ., բն. 29), (այսուհետ՝ Փոխառու), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Փոխատուն պարտավորվում է, համաձայն ՀՀ Շիրակի մարզի Գյումրու ավագանու 14.11.2014թ. N 153-Ա և Գյումրի համայնքի ղեկավարի 06.11.2015թ. N 2054-Ա որոշումների, Փոխառուին 10 (տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործմանը հանձնել ք.Գյումրի, Երևանյան խճուղի. N 107/6 (մեկ հարյուր յոթ/վեց) հասցեի 261.37 (երկու հարյուր վաթսունմեկ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառ.մ մակերեսով շինությունը և 0,20799 (զրո ամբողջ քսան հազար յոթ հարյուր իններսունինը հարյուրհազարերորդական) հա մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք), իսկ Փոխառուն պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով մաշվածությունը: Պայմանագրի գործողությունը սկսվում է նոտարական հաստատման օրվանից:

1.2 Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանման Գյումրու սպասարկման գրասենյակի կողմից տրված 23.06.2015թ. N 23072015-08-0012 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի:

1.3 Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

2. Կողմերի իրավունքները ու պարտավորությունները

2.1. Փոխատուն իրավունք ունի.

2.1.1. Փոխառուից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2. եթե ծանուցվել է Փոխառուի պահանջների կամ Գույքի թերությունները Փոխատուի հաշվին վերացնելու մտադրության մասին, Գույքը փոխարինել պատշաճ վիճակում գտնվող այլ նմանօրինակ գույքով.

2.1.3. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.

2.1.4. Փոխառուից պահանջել Գույքը պահել սարքին և վերադարձնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

2.2. Փոխատուն պարտավոր է.

2.2.1. սույն պայմանագիրը ստորագրելու պահից 5 /հինգ/ օրվա ընթացքում Փոխառուին հանձնել պայմանագրի 1.1 կետում նշված անշարժ գույքը, ինչպես նաև՝ գույքի նկատմամբ գրանցված իրավունքները հաստատող փաստաթղթերը.

2.2.3. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխան վիճակում.

2.2.4. Փոխառուին տեղյակ պահել Գույքի թերությունների մասին:

2.3. Փոխառուն իրավունք ունի.

2.3.1. Փոխատուի կողմից Գույքի թերությունների մասին չհայտնելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.2. Գույքը երրորդ անձի օգտագործմանը հանձնել միայն Փոխատուի համաձայնությամբ:

2.4. Փոխառուն պարտավոր է.

2.4.1. Գույքը պահպանել սարքին վիճակում.

2.4.2. կատարել Գույքի պահպանման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը.

2.4.3.Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան՝ Գյումրու դպրոցահասակ երեխաների կրթության և դաստիրակության կետրոն ստեղծելու և բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով:

2.4.4. կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.

2.4.5 Գույքը վերադարձնել Փոխատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

2.5. Մինչև սույն պայմանագիրը կնքելը պայմանագրի 1.1 կետում նշված անշարժ գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ և արգելքի տակ չի գտնվում, որը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանման Գյումրու սպասարկման գրասենյակի կողմից տրված 22.12.2015թ. N ՍՏ-22122015-08-0308 միասնական տեղեկանքով:

2.6. Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը վճարում է Փոխառուն:

2.7. Սույն պայմանագրին առնչվող գործող օրենսդրության նորմերը պարզաբանվել են նոտարի կողմից:

2.8. Սույն պայմանագրի 1.1. կետում մշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը Փոխատուի մոտ ծագում է սույն պայմանագրից բխող իրավունքի պետական գրանցման պահից:

3.Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

3.1. Փոխատուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե Փոխառուն՝

3.1.1. Գույքն օգտագործել է պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

3.1.2. չի կատարել գույքի պահպանման՝ այդ թվում՝ ընթացիկ և հիմնական վերանորոգում կատարելու իր պարտականությունները.

3.1.3. էականորեն վատթարացել է Գույքի վիճակը.

3.1.4. առանց Փոխատուի համաձայնության Գույքը հանձնել է երրորդ անձի.

3.2. Փոխառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե '

3.2.1. հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք Գույքի բնական օգտագործումը դարձնում են անհնար և որոնց մասին ինքը չգիտեր ու չէր կարող իմանալ պայամանգիրը կնքելիս.

3.2.2. Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի այնպիսի հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում.

3.2.3. Փոխատուն չի կատարել Գույքը և դրան վերաբերող փաստաթղթերը հանձնելու իր պարտականությունը:

3.3. Սույն պայմանագիրը դադարում է նաև Փոխառուի գործունեությունը դադարելու դեպքում:

4. Կողմերի իրավունքները ու պատասխանատվությունները

4.1. Փոխառուն կրում է անհատույց օգտագործման հանձնված Գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե Գույքը ոչնչացել կամ վնասվել էվնասվել է պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան օգտագործելու հետևանքով, կամ այն առնց Փոխատուի համաձայնության հանձնել երրորդ անձի:

4.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունները /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսվանից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից և գործում է 10 (տասը) տարի ժամկետով ժամկետով (հիմք՝ Գյումրի համայնքի ավագանու 14.11.2014թ. N 153-Ա և Գյումրի համայնքի ղեկավարի 06.11.2015թ. N 2054-Ա որոշումներ):

6.2. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

7. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք բերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. Այլ պայմաններ

8.1.Փոխատուի գործունեության դադարելու, վերակազմակերպման դեպքում Փոխատուի իրավունքներն ու պարտականություններն անցնում են իրավահաջորդին:

8.2.Փոխառուի գործունեության դադարելու, վերակազմակերպման դեպքում Փոխառուի իրավունքներն ու պարտականություններն անցնում են իրավահաջորդին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Սույն պայմանագիրը կնքված է 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

9.2. Սույն պայմանագրից ծագող իրավունքները 30-օրյա ժամկետում ենթակա է գրանցման, հաշվառման լիազոր մարմնում:

9. 3.Պայմանագիրը բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից: Տեքստում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ չեն կատարվել:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Փոխատու՝
Գյումրի համայնքի ղեկավար

Ս. Բալասանյան

ք.Գյումրի, Վարդանանց հրպ. 1

Հայէկոնոմբանկ 900215301012353

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՇՏ

Կ.տ. ստորագրություն

քսանհինգ դեկտեմբերի երկու հազար տասնհինգ թվական

Փոխառուի

Սևան Իսրայելի Ամիրյանս

Կ.տ. ստորագրություն

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Գյումրի նոտարական տարածքի

Նոտար *Ռոբերտ Մուկուչյանիս* կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

Պայմանագիրը ստորագրողների ֆիզիկական անձի ինքնությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են, սույն պայմանագրից բխող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի գրանցման համապատասխան ստորաբաժանումում համաձայն քաղաքացիական օրենսգրքի 563 հոդվածի:

Գրանցված է սեղանամատյանում --9723----------ով:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ Պետական տուրքի մասին և ՀՀ Նոտարիատի մասին օրենքների:

Նոտար _____

ստորագրությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «8» Հունվարի 2016 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

,, ԴԵՊԻ ԱՌԱՋ,, բարեգործական հասարակական կազմակերպություն

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 107/6 նախակրթարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Գյումրի համայնքի ղեկավարի 06.11.2015թ. թիվ 2054-Ա որոշում, գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ 25.12.2015թ. թիվ 9723

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-1171-0019

Մակերեսի չափը (հա)՝ 0.20799

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ